488

1. Եկե՛ք քննենք մենք մի պահ մեր հոգին՝
Ի՞նչ ունենք իրար դեմ:
Ինչը որ Աստծուն հաճելի չէ,
Մեր միջից հանենք:
Մի՛ ամաչիր, իմ սիրելի եղբայր
Եվ դո՛ւ, իմ քույրիկ,
Մեկ ընտանիք ենք մենք, մեկ Հոր որդիք՝
Հիսուս Քրիստոսով:

Շատ անգամներ իմ անձը
Վեր բարձրացնելով՝ չեմ կարողացել սիրել ձեզ,
Բայց, սիրելի՛ եղբայրս և անուշի՛կ իմ քույրս,
Ինձ ներեք այսօր:

2. Եկե՛ք քննենք մենք մի պահ մեր հոգին
Աստծո Սուրբ Խոսքով,
Խոստովանենք մեր սխալ վարմունքներն
Անկեղծ զղջումով:
Եկե՛ք հարցնենք մենք մեզ այս վայրկյանին՝
Ի՞նչ վիճակի մեջ ենք,
Արդյոք մինչև ե՞րբ կարող ենք ապրել
Մենք՝ մեզ խաբելով: